

Կը սիրէ Աստուածամայրը, ինչ գոյն ալ ունենայ ան: Արար Աստուածամայր, թուխ Աստուածամայր, կաթի կամ ոսկիի պէս Աստուածամայր:

Պոլսեցին, եթէ Աստուածամօր նայի, միտքը կ'իյնայ օղին: Իսկ եթէ օղի խմէ, ամէն կին իրեն Աստուածամայր կ'երեւի:

Իսկ եթէ բնութեան մէջ ըլլայ, կ'աղաղակէ յափշտակուած.

-Ճօ՛, աս ինչ աղուոր տեղ է հոս: Մե՛ղք, մե՛ղք, մե՛ղք: Շիշէ մը օղի, պնակ մը տողմա եւ Աստուածամայր մը եթէ ըլլար, հիմա սաստեղը հանդիսաւոր պատարագ մը կ'ընէինք:

Պոլսեցին Աստուածամայրը հեթանոսացուցած է, հեթանոսութիւնը յաջողապէս քրիստոնեացնելու համար: Եւ վասն թողութեան մեղաց:

*

Պոլսեցին կամ պաշտօնեայ է (պանքայի գրագիր), կամ արհեստաւոր եւ կամ արուեստագետ: Վերջին երկու պարագային ալ ծոյլ: Երբ գործէ, կ'աշխատի արագ ու լաւ:

Աստուած վեց օր աշխատած է երկինքն ու երկիրը ստեղծելու համար, իսկ ամբողջ օր մը տուած է միայն Պոլիսը շինելու համար՝ իր հեքեաթագեղ ջուրերով, կղզիներով, բարձունքներով ու լուսախաղերով: Այս մոգական միջավայրին մէջ ծնած ըլլալով՝ բանաստեղծ է Պոլսեցին: Ու չկայ Պոլսեցի մը, որ սիրային ոտանաւոր մը գրած ու զայն տասը օրիորդի նուիրած չըլլայ:

Պոլսեցին բացառիկ ընդունակութիւն ունի երաժշտութեան համար: Չկայ Պոլսեցի մը, որ դաշնակի վրայ անխնայ զարկած չըլլայ Շոփէնը, Շումանը, Շուպերթը, Պախը, Պեթհովէնը եւ Շահիր Պիւրիան պէյի կտորները:

Անկարելի է գտնել Պոլսեցի մը որ չունենայ դերասանական տաղանդ: Ահա թէ ինչու հայ թատրոնի պաշտօնական ծագումն ու ծաղկումը տեղի ունեցած է Պոլսոյ մէջ: Ճշդագոյնը ըսած կ'ըլլանք, եթէ արծանագրենք, որ Պոլսեցին կեանքի գերագոյն դերասանութեան անընդունակներն է, որ յանձնած է թատերական բեմին: